ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-20-4/22-1

ք. Երևան 20 .08.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Խանդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 14803901.92 (տասնչորս միլիոն ութ հարյուր երեք հազար ինը հարյուր մեկ հազար դրամ ինսուներկու լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրությունե բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ սպառազինության վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Ք. Երևան Նար Դոսի 122
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	ՀՀ 217002119584001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 09209297
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-4/22-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Առաջարկվող ապրանքի					
	անվանումը	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
2	Ավտոմեքեն աներ անիվներ	Алтайский шинный комбинат	Я-245-1/Я-245	Я-245-1/Я-245	Алтайский шинный комбинат	Անվանումը՝ Անվադող 215/90-15C: Նշանակությունը՝ սեզոնային, ՈՒԱԶ մակնիշի ԱՏ-ների համար անվախուցով՝ սեզոնային: Անվադողի անվանումը, պահպանաշերտի մոդելը՝ "Я-245-1" , "Я-245": *Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ K(110), Անվադողի բեռնվածության ինդեքսը՝ 99, Անվադողի բեռնվածությունը /կգ՝ 775: Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ.: Ապրանքները նոր են և չօգտագործված:*
3	Ավտոմեքեն աներ անիվներ	MAXXIS	MA-SLW	MA-SLW	MAXXIS	Անվանումը՝ Անվադող 195R15C: Նշանակությունը՝ ձմեռային, Տոյոտա-Հիասե մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար անվախուցով: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ Q (160), Անվադողի բեռնվածության ինդեքսը՝ 106/104, Անվադողի բեռնվածությունը /կգ՝ 950/900: Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ.: Ապրանքները նոր են և չօգտագործված:
4	Ավտոմեքեն աներ անիվներ	WANLI	SW312	SW312	WANLI	*Անվանումը՝ Անվադող 195/60R16: Նշանակությունը՝ ձմեռային, Կիա-Սենտրա մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ Q (160), Անվադողի բեռնվածության ինդեքսը՝ 89, Անվադողի բեռնվածությունը /կգ՝ 580: Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ.: Ապրանքները նոր են և չօգտագործված:*
5	Ավտոմեքեն աներ անիվներ	POWERTRAC	SNOWSTAR	SNOWSTAR	POWERTRAC	Անվանումը՝ Անվադող 215/55R16: Նշանակությունը՝ ձմեռային, Ֆորդ-Մոնդեո մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ H (210), Անվադողի բեռնվածության ինդեքսը՝ 97, Անվադողի բեռնվածությունը /կգ՝ 730: Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ.: Ապրանքները նոր են և չօգտագործված:
6	Ավտոմեքեն աներ անիվներ	COMFORSER	CF930	CF930	COMFORSER	*Անվանումը՝ Անվադող 215/60R16: Նշանակությունը՝ ձմեռային, Տոյոտա Քեմրի մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ H (210), Անվադողի բեռնվածության ինդեքսը՝ 99, Անվադողի բեռնվածությունը /կգ՝ 775: Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ.: Ապրանքները նոր են և չօգտագործված:*
7	Ավտոմեքեն աներ անիվներ	CORDIANT	CORDIANT_POLAR_SL, PW-404	CORDIANT_POLAR_SL, PW-404	CORDIANT	Անվանումը՝ Անվադող 195/65R15: Նշանակությունը՝ ձմեռային, ՀՅՈՒՆԴԱՒ-ԷԼԱՆՏՐԱ, ԿԻԱ-ՍԵՌԱՏՈ, ԳԱԶ-3110 մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ T (190), Անվադողի բեռնվածության ինդեքսը՝ 91, Անվադողի բեռնվածությունը /կգ՝ 615: Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ.: Ապրանքները նոր են և չօգտագործված:
8	Ավտոմեքեն աներ անիվներ	WANLI	SW312	SW312	WANLI	Անվանումը՝ Անվադող 265/65R17: Նշանակությունը՝ ձմեռային, ՋԻՊ, ՊՐԱԴՈ, ԼԱՆԴ-ԿՈՒՐԶԵՌ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ S (180), Անվադողի բեռնվածության ինդեքսը՝ 112, Անվադողի բեռնվածությունը /կգ՝ 1120: Անվադողի

						արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ.: Ապրանքները նոր են և չօգտագործված:
9	Ավտոմեքենաների անիվներ	WANLI	SW312	SW312	WANLI	Անվանումը՝ Անվադող 265/60 R18: Նշանակությունը՝ ձմեռային, ԶԻՊ ԼԱՆԴ ԿՌՈՒԶԵՌ ՊՐԱԴՈ, ՄԻՑՈՒԲԻՇԻ ՊԱՋԵՌՈ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ S (180), Անվադողի բեռնվածության ինդեքսը՝ 114, Անվադողի բեռնվածությունը /կգ՝ 1180: Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ.: Ապրանքները նոր են և չօգտագործված:
10	Ավտոմեքենաների անիվներ	WANLI	SW211	SW211	WANLI	Անվանումը՝ Անվադող 205/55 R16: Նշանակությունը՝ ձմեռային, ՀՅՈՒՆԴԱՒ-ԷԼԱՆՏՐԱ, ԿԻԱ-ՍԵՌԱՏՈ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ H (210), Անվադողի բեռնվածության ինդեքսը՝ 91, Անվադողի բեռնվածությունը /կգ՝ 615: Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ.: Ապրանքները նոր են և չօգտագործված:
11	Ավտոմեքենաների անիվներ	POWERTRAC	SNOWMARCH	SNOWMARCH	POWERTRAC	Անվանումը՝ Անվադող 285/60 R18: Նշանակությունը՝ ձմեռայինԶԻՊ ԼԱՆԴ ԿՌՈՒԶԵՌ ՊՐԱԴՈ, ՄԻՑՈՒԲԻՇԻ ՊԱՋԵՌՈ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ T (190), Անվադողի բեռնվածության ինդեքսը՝ 116, Անվադողի բեռնվածությունը /կգ՝ 1250: Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ.: Ապրանքները նոր են և չօգտագործված:
12	Ավտոմեքենաների անիվներ	POWERTRAC	SNOWTOUR	SNOWTOUR	POWERTRAC	Անվանումը՝ Անվադող 235/65 R17: Նշանակությունը՝ ձմեռային ԿԻԱ, ՍԵՌ մակնիշների կամ համարժեք այլ ԱՏ-ների համար: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ T (190), Անվադողի բեռնվածության ինդեքսը՝ 104, Անվադողի բեռնվածությունը /կգ՝ 900: Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ.: Ապրանքները նոր են և չօգտագործված:
13	Ավտոմեքենաների անիվներ	POWERTRAC	SNOWTOUR	SNOWTOUR	POWERTRAC	Անվանումը՝ Անվադող 225/75 R16: Նշանակությունը՝ ձմեռային, Կիա Սորենտո մակնիշի կամ համարժեք այլ ԱՏ-ների համար: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ S (180), Անվադողի բեռնվածության ինդեքսը՝ 115/112, Անվադողի բեռնվածությունը /կգ՝ 1215/1120: Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ.: Ապրանքները նոր են և չօգտագործված:
14	Ավտոմեքենաների անիվներ	TORQUE	TQ701	TQ701	TORQUE	Անվանումը՝ Անվադող 12.00 R20: Նշանակությունը՝ պահպանաշերտի գծանկարը-ունիվերսալ, կառուցվածքը-ՇՄԿ, all steel, radial steel (ամբողջական մետաղական կառուցվածքով): Հինո-700 կիսակցորդի կամ համարժեք այլ տեխնիկայի համար անվախուցով և անվադողի ժապավենով: Անվադողի շերտայնությունը՝ PR20: Անվադողի սահմանելի արագության ինդեքսը/կմ/ժ՝ K (110), Անվադողի բեռնվածության ինդեքսը՝ 156/153, Անվադողի բեռնվածությունը /կգ՝ 4000/3650: Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ.: Ապրանքները նոր են և չօգտագործված:
15	Ավտոմեքենաների անիվներ	TORQUE	TQ322	TQ322	TORQUE	Անվանումը՝ Անվադող 12.00 R24: Նշանակությունը՝ պահպանաշերտի գծանկարը-ունիվերսալ, կառուցվածքը-ՇՄԿ, all steel, radial steel (ամբողջական մետաղական կառուցվածքով): Հինո-700 կիսակցորդի կամ համարժեք այլ տեխնիկայի համար անվախուցով և անվադողի ժապավենով: Անվադողի շերտայնությունը՝ PR20: Անվադողի

						սահմանների արագության ինդեքսը/կմ/ժ՝ K (110), Անվադողի բեռնվածության ինդեքսը՝ 160/157, Անվադողի բեռնվածությունը /կգ՝ 4500/4125: Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ.: Ապրանքները նոր են և չօգտագործված:

Ծանոթություն

1. Անվադողերը ըստ տեխնիկական բնութագրի պետք է համալրված լինեն անվախուցով , անվադողի ժապավենով և անվախուցի փականով:
2. Այն անվադողերը, որոնց տեխնիկական բնութագրերով նշված է <<ձմեռային>> անվադողերի դեպքում <<*>> (ձյան փաթիլի նախշանկար):
3. Անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ քան 2019թ:
4. տեխնիկական բնութագրի հետ միաժամանակ մասնակիցների կողմից ներկայացվեն առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (ինչը հետագայում պետք է մատակարարվի և նշվի պայմանագրում) և մատակարարման (ընդունման) ժամանակ ներկայացնել մուտքագրվող անվադողի համապատասխանության վերաբերյալ սերտիֆիկատը:
5. Անվադողերի երաշխիքային ժամկետը ապրանքը ընդունելու օրվանից հաշված ոչ պակաս 1տարի կամ 5000կմ վազք աշխատատեղությամբ:
6. Մատակարարված անվադողերի ժամանակից շուտ շարքից դուրսգալու դեպքում, բողոքարկման (ռեկլամացիոն) աշխատանքները կազմակերպել ՀՀ ՁՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության (զորամասի, առորդաժանման) և մատակարար կազմակերպության մասնագետների անմիջական մասնակցությամբ, արտադրական խոտանի դեպքում վերսկանգնումը մատակարարող կազմակերպության կողմից նմանատիպ ապրանքով՝ նախապես հաշվի առնելով ժամանակից շուտ շարքից դուրս գալու պատճառները, մնացած դեպքերում ըստ ուսումնասիրությունների արդյունքների:
7. Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
8. Ապրանքները պետք է հանձնվեն Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, Եղվարդի խճ. ՀՀ ՊՆ 84029 զորամաս:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

դրամ

Հ/Հ	Անվանումը	չ/մ	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը	Գնման ժամանակացույց 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020 թ.
2	Ավտոմեքենաների անիվներ	հատ	84	25000	2100000	84
3	Ավտոմեքենաների անիվներ	հատ	4	40798	163192	4
4	Ավտոմեքենաների անիվներ	հատ	4	19638	78552	4
5	Ավտոմեքենաների անիվներ	հատ	8	18638	149104	8
6	Ավտոմեքենաների անիվներ	հատ	8	21238	169904	8
7	Ավտոմեքենաների անիվներ	հատ	20	13638	272760	20
8	Ավտոմեքենաների անիվներ	հատ	38	30338	1152844	38
9	Ավտոմեքենաների անիվներ	հատ	20	33638	672760	20
10	Ավտոմեքենաների անիվներ	հատ	16	15798	252768	16
11	Ավտոմեքենաների անիվներ	հատ	16	40338	645408	16
12	Ավտոմեքենաների անիվներ	հատ	16	28338	453408	16
13	Ավտոմեքենաների անիվներ	հատ	14	39637.28	554921.92	14
14	Ավտոմեքենաների անիվներ	հատ	30	131638	3949140	30
15	Ավտոմեքենաների անիվներ	հատ	30	139638	4189140	30

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ Տնօրեն

Ա. ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-4/22-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	անվանումը	CPV կոդը	Գնման առարկայի Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝		
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
2	Ավտոմեքենաների անիվներ	34351200/12	2100000	2100000	2100000
3	Ավտոմեքենաների անիվներ	34351200/20	163192	163192	163192
4	Ավտոմեքենաների անիվներ	34351200/22	78552	78552	78552
5	Ավտոմեքենաների անիվներ	34351200/25	149104	149104	149104
6	Ավտոմեքենաների անիվներ	34351200/27	169904	169904	169904
7	Ավտոմեքենաների անիվներ	34351200/30	272760	272760	272760
8	Ավտոմեքենաների անիվներ	34351200/41	1152844	1152844	1152844
9	Ավտոմեքենաների անիվներ	34351200/47	672760	672760	672760
10	Ավտոմեքենաների անիվներ	34351200/32	252768	252768	252768
11	Ավտոմեքենաների անիվներ	34351200/49	645408	645408	645408
12	Ավտոմեքենաների անիվներ	34351200/56	453408	453408	453408
13	Ավտոմեքենաների անիվներ	34351200/54	554921.92	554921.92	554921.92
14	Ավտոմեքենաների անիվներ	34351200/72	3949140	3949140	3949140
15	Ավտոմեքենաների անիվներ	34351200/75	4189140	4189140	4189140

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր կարիքների պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ Տնօրեն

Ա. ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-4/22-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« ե « ե 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____ե «_____ե 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « ե « ե 20 թ. դրտս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.